

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՒԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՆ ՈՒՍՈՒԱԾՔ)
(Շարունակութիւն) *

Ի.

Վ. Ի Պ Ա Ս Ա Ն Ք.

2.

Առասպելական հարց:

Վիշապազունք եւ վիշապը:— Մարքի զարմք Աժդահակայ Մուրացան նախարարը եւ վիշապազունք— ի՛նչ կապ այս անունների մէջ: Արդեօք վիպասանքի մէջ այդ անուններըն իրրեւ համանիշ եւ անխախտ գործածուած են: Թէ չէ: Այդ որոշելը դժուար չէ, երբ մի անգամ արդէն զիտենք թէ ինչպէս Խորենացին առասպելն այլաբանութիւն համարելով մեկնում է, մանաւանդ որ պատմագիրն էլ սովորաբար յայտնում է թէ որն է իւր մեկնութիւնը:

1. Խորենացին գրում է (Ա. Լ.). «... Թուելիացն երգքս... յորս շարին բանք երգոցն զԱրաաշխէ եւ զորդուոց նորա յիշելով այլաբանաբար եւ զզարմիցն Աժդահակայ վիշապազունս զնոսա կոշելով զի Աժդահակը ի մեր լիզուս է վիշապ»: Այս խօսքերից պարզ երևում էր որ երգերի մէջ գործողներին Վիշապազունք անունն է տրուում եւ թէ ինքը պատմագիրն այդ վիշապ—ազունք (=զարմք վիշապի) անունը այլաբանաբար ընդունելով

համարում է զարմք Աժդահակայ Նորահիմքը Աժդահակ բառի վիշապ նշանակութիւնն է: Խորենացին ուրեմն կարծում է վիպասանքի մէջ Վիշապազունք կոչումը Աժդահակայ զարմք կոչումի հոյացրած ձևն է միայն:

2. Վիպասանաց բովանդակութեան մէջ (Բ. խթ.) յիշում է. «Եւ իբր արփանք Սաթինկան ընդ վիշապազունսն առասպելաբար այսինքն ընդ զարմս Աժդահակայ որ ունին զամենայն զառ ստորտոռնն Մասեաց: Պատմագիրն այստեղ էլ շատ որոշ գրում է թէ իբրեւ առասպել (առասպելաբար) պատմում է վիպասանքի մէջ թէ Սաթինիկ վիշապազունք է սիրելի Բայց նա ինքը ինչպէս բացատրական «այսինքն» բառը ցոյց է ապիւս վիշապազունք գործնում է զզարմք Աժդահակայ: Սաթինիկի այդ արփանքը կամ սէրը Ա. Լ. գրած է Արգաւանի համար: Ուստի եւ Արգաւանը ներկայանում է իրրեւ վիշապազունք:

3. Թէ Արգաւան վիշապազունք կամ վիշապ է հաստատուում է նոյն տեղում բերած կտորից. «Ծառ ասնն գործել Արգաւանայ ի պատիւ Արտաշխի եւ խարդաւանակ լիալ նմին ի տաճարին վիշապաց»: Եոյն պատմութիւնը Բ. ծա. զգարգարեալս պատմութեան մէջ գրում է այսպէս: «Երթալով Արտաշխի ի ծառ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ գաւել զարքայն խորհեցան, յարուցանեն որդիքն արքայի ապշոպ, եւ անդէն իսկ ի նացին քարշեն զալիսն Արգամայ: Եւ խափութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արաաշխ արքայ, գարձեալ արձակեաց զորդի իւր Մաթան մեծաւ գնդաւ, եւ զբազումս յազգէն Մուրացան սպանանել եւ զապարաննն Արգամայ այրել...»: Կընշանակէ Արգաւանն Արտաշխի ծառի է հրաւիրում Արտաշատից գորս իւր կալուածում ուր կարծում են թէ խարդաւանակ է լինում նորան Եթէ Արգաւանի այդ տաճարը կամ ապարանքը ուր ծառն ու խարդաւանքն է լինում կոչուում է տաճար վիշապաց, ուստի եւ ինքը Արգաւանն իրրեւ վիշապ է ներկայանում:

4. Վիշապազունք=զարմք Աժդահակայ համարելուց յետոյ, պատմագիրը բերում է Արգաւանի այս ծառը Արաւազգի շինելն

հայոց՝ վեց հարիւր վարսուն ամիս, յեկիտն Ընշունեաց ի գաւառն Տարայ» (=Տարայ) ի Գոյոյ քաղաքն, որ ասի Արտամե: մեծ ի Շամիրամակերս մեծ Գրեկին Վաւոյ կոչն: Պատմութիւնն սխալում է մեզ մետաբերող Սեփականսի պատկից, որ նոյնպէս կոչում է Սեփականսու եւ քահանայ եր: նկարագրում է Տեր Յանսիսն առաջինի վարքը, յիշում է քարաւայ արշաւանք սուսնց քուսականի, բայց հայոց 675 քուսակակից յետոյ: Մասկոնի պատմութեան այլազգին անուանում է Էմսիս ի քերդեկ Ամրոյ: Կան նաև ուրիշ սեպիլներ եւ մանրամասնութիւններ: Վարի այս ընդարձակ խմբագրութեան մեծագրեր մեզ յայտնի չեն: Պրեմի քաղաքի պատմութեան նրատարակութեանց մասին մեւ Զար- Մասեագիր, 583:

* Տես Արարատ 1900 համար, Գ. եր. 194:

«ի մէջ Մարաց զՄարակերտ» և Սաթենիկի սէրն առ Արզաւան և ապա իսկոյն աւելացնում է. «Եւ արդ ո՛չ առաւել աստանօր զարմացիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց: որք են յագասն ի վեր ի Մասիս»: Պատմագիրն ուրեմն ասում է. որ պատմութիւններն իսկապէս են «անյայտ իրք վիշապաց»: Եւ բնաւ չէ թաքցնում այդ, այլ նոյն իսկ հրաւիրում է զարմանալու իւր զրաճի վրայ: Բայց ինչո՞ւ համար պէտք է զարմանալ: Անոր համար, որ նա թուելեաց երգերի կցկոտեր բովանդակութիւնն է մէջ բերել, այն էլ մեծ մասամբ երգի բառերով: Ի հարկէ ո՛չ: Դա մի զարմանալու բան չէ: Այլ պէտք է զարմանալ նորա սրամտութեան վրայ, որ կարողացել է «յայտնել զանյայտ իրս վիշապաց»,¹ այսինքն անհասկանալի առասպելը մեկնել և հասկանալի կամ «ճշմարտապատմութիւն» դարձնել: Եւ ի՛նչ է այդ մեկնութիւնը, եթէ ոչ երգի մէջ յիշուած առասպելական վիշապազունքը կամ վիշապք դարձնել զարմը Աժղանակայ: այսինքն Մարք:

Այս հատուածից իմանում ենք և այն, որ երգի մէջ վիշապազունք և վիշապք իրրե համանիշ են գործ ածուած: որովհետե նախ ասում է թէ երգը վիշապազանց մասին է յիշում և քիչ յետոյ այդ վիշապազանց պատմութիւնը «իրք վիշապաց» է անուանում: Այսպէս այստեղ ևս ինչպէս վերևում տեսանք, Արզաւանը թէ՛ վիշապ և թէ՛ վիշապազն է:

5. Թէ երգի մէջ վիշապազունք են յիշուել և ոչ թէ Մարք կամ զարմը Աժղանակայ՝ դարձնալ երևում է Բ. կա. գլխից: ուր երգիչներն ասում են թէ՛ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազը և զև փոխանակ հղին», որ և «ոմանք»: պատմելով այդ «պատահարը» մեկնել են թէ այդ նշանակում է «խախտուել զսա (Արտաւազըին) կանանց զարմիցն Աժղահակայ»: (Հմմտ. Գլ. Գ.):

Այստեղից և այն ենք իմանում, որ մեր պատմագիրն իրենից չէ անում այդ մեկնութիւնը, թէ վիշապազունք են զարմը Աժղահակայ կամ մարք: Այլ այդ ծանօթ է նաև ուրիշներին, որոնցից առնում է ինքն այդ «պատահարի» պատմութիւնը:

Խորենացու մեկնութիւնը:—Տեսնենք թէ ինչ եղանակով դատելով պատմագիրը կամ նոքա՝ որոնցից նա առնում է, այդ վիշապները կամ վիշապազունք նոյնացնում են Մուրացանների հետ:

Վիշապներ կամ վիշապազունք առասպելական էակներ լինելով՝ անհաւատալի բաներ են: Ռացիոնալիստ պատմագիրը, որ նոյն իսկ աստուածներն իրրե մարդ եղած է մեկնում կարող չէ հաւատալ, որ Սաթենիկ թագուհին մի վիշապ կամ վիշապազունք սիրած լինի, և կամ Արտաշէս թագաւորը նոցա հետ յարաբերութիւն ունեցած լինի: Բայց մի անգամ որ նոքա Արտաշէսի պատմութեան մէջ մտնում են, պէտք է ըստ Խորենացու հայեացքին առասպելի վրայ՝ այլարանարար առասպել համարել այդ և մեկնելով ճշմարտել: Եւ այդ անում է շատ հեշտ կերպով. «որովհետե Աժղահակ մեր լեզուով վիշապ է», ուստի և երգի վիշապազունք են զարմը Աժղահակայ: Իսկ Աժղահակն էր մարաց թագաւորը,² ուստի և վիշապազունք են ոչ միայն Աժղահակայ զարմը, այլ և մարք, որ բնակում են Հայաստանում:

Միւս կողմից, պատմագիրը (Բ. Ը) Մուրացան նախարարութեան համար գիտէ. «Ոչ ասեն, նահապետի ազգին՝ Մուրացան տէր այլ մարացուցն տէր»: Այստեղից եզրակացնում է նա Մուրացանների մարացի լինելը: Եւ երբ միանգամ նոքա մարացիք են, մարական ծագում ունին, անուշա հասարակ ծագում պիտի չունենային, այլ մի իշխանից կամ թագաւորից սերուած: ինչպէս շատ նախարարական աներ: Եւ ումինից յատկապէս, եթէ ոչ «ի զաւակէ Աժղահակայ մարաց եղելոյ թա-

1. Հմմտ. Ա. գրքի Բ. յաւելում: Բարասպի առասպելի մեկնութիւնը. «... միտ անմտերեան ճոցս տալով և զխախ վազոց ճոցս իւրս և ճոցս սեհասակն իստաւալով յայտնեմ»:

1. «Բայց յիշատակեցոցի և և մի կարճատօզիս, և զայլաբանութիւնն ճշմարտեացոցի» (Բ. Խր):
2. Այս մասին յետոյ ևս: Տիրանի և Աժղահակի մասին գրելու իստ կ'ունենանք:

գաւորի» (Բ. Ը), որի սերունդները բերուած են Հայաստան:

Այսպէս մի կողմից վիպասանքի մէջ յիշուած վիշապք կամ վիշապազունք նոյն են ինչ որ զարմբ Աժգահակայ կամ մարք. իսկ միւս կողմից Մուրացանք կամ մարացեոցն տեարք ունին մարական ծագում և են մարաց Աժգահակ թագաւորի սերնդից: Ուստի բանավարութիւնը հեշտութեամբ պիտի տանէր այն եզրակացութեան, թէ Մուրացանք են վիշապազունք:

Պատմագիրն իւր այս եզրակացութեան համար իրրև հաստատութիւն զանում է նոցա բնակութեան տեղի նոյնութիւնը կամ մտփկութիւնը: Եւս Ա. Ը. յայտնում է, որ ըստ թուելեաց երգերի վիշապները, նոյն և վիշապազունք, ընակում են յազատն ի վեր ի Մասիս: Իսկ Բ. իսթ. յայտնում է, որ զարմբ Աժգահակայ (= Մարք = վիշապազունք՝ առասպելաբար) «ունին զամենայն զառ ստորտուն Մասեաց»: Իսկ յայտնի է, որ Մարք իրօք գտնուում են Մասիսի արեւելեան ստորտաներում մինչև Գողթն: Եւս վկայութիւնը զանում ենք և Փառատոս Բիւզանդի ու կորիւնի մէջ և ուրիշ տեղերում: Ինչպէս և Խորենացին ինքը Աժգահակայ սերունդ ու նորա կնոջ հետ գերուած մարերին բնակել է տալիս «յարեւելայ ուսոց մեծի լերինն» [Մասեաց] մինչև ի սահմանս Գողթան... Իսկ ի միւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժգանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանոց»: ... Իսկ Բ. ծա. գլխի մէջ այդ կողմերը դնում է կալուած Մուրացանների և յատկապէս Մուրացան Արգամի, «որ ի ծննդոցն Աժգահակայ» (Բ. իսթ) և յիշում է Նախճաւան և «ըստ հիւսիսոյ Նրասխայ» որ, ինչպէս յետոյ կրտսններք, Մասիսի զիմացն է հասկանում Շարուրայ դաշտը:

Այսպէս մի կողմից՝ առասպելի մէջ վիշապների կամ վիշապազանց բնակութեան տեղերը կապուած են Մասիսի հետ, իսկ միւս կողմից մարաց (կամ Աժգահակայ զարմի ըստ Խորենացու) բնակութեան տեղերը՝ նոյն և Մարացեոց տեղերի՝ Մուրացաններինը, նոյն Մասիսի ստորտաներում են, որով և պատմագիրը հաստատած է համարում իւր բացարութիւնները:

Այսպիսի մեկնութեամբ լոկ առասպելի վիշապները նոյննում են մարաց (Աժգահակայ սերնդի) և մուրացանների հետ: Եւ Խորենացին իւր ժամանակի հասկացողութեամբ, պարծենալու տեղիք ունէր, թէ ինչպէս ինքը յայտնել է «զանյայտ իրս վիշապաց որք են յազատն ի վեր ի Մասիս»: Բայց մեզ համար այս բոլոր մեկնութիւնները, հարկաւ նշանակութիւն չունին: Եւ մեր առաջին խնդիրը պէտք է լինի այդ ամեն իմանալուց յետոյ, զուրս ձգելով ինչ որ Խորենացու մեկնութիւնն է, վերականգնել բուն առասպելը:

Սակայն պ Սալաթեանն այդ պարզ ճանապարհը թողած, աճապարում է հեշտութեամբ ցոյց տալ թէ վիպասանք Խորենացու սարքածն է: Արգամի և Արտաւազդի թշնամութեան պատճառը համարելով Արտաւազդի նախանձը թագաւորի երկրորդութեան պատուի համար՝ որ ունէր Արգամի նա խնդիրը բողոքովին սխալ է դնում (եր. 251): «Ամբողջ խնդիրն այն է թէ արդեօք Հայաստանում երբ և է կսր մարացի Աժգահակայ սերուած Մուրացան նախարարութիւն, որ կոչուէր Մարացի և Ա. դարում Բրիտտոսից յետոյ այնքան աչքի ընկնող տեղ, այսինքն թագաւորի երկրորդութիւնը, ունենար այս աշխարհի քաղաքական իշխանութիւնների (ieparchia) մէջ»: Եւ նա թուելով մի քանի առարկութիւն եր, որոնց մի մասը առարկութիւն անդամ չեն, շտապում է եզրակացնելու (եր. 262). «Այնքան հին ժամանակներում Մուրացան նախարարութեան գոյութիւնը Հայաստանում ինչպէս և նորան վերագրած առաջնակարգ դերը տերութեան մէջ, աւելի քան կասկածելի են: Եթէ այդ եզրակացութիւնն անհիմն չէ, այն ժամանակ առիթ էլ չէր կարող լինել (sic!), որ արքայապն Արտաւազդը կռուէր ընդդէմ Մուրացան իշխան Արգամի՝ «թագաւորի երկրորդ» պատուաւոր կոչումը ձեռք բերելու համար: Ուստի և պէտք է շինճու (Ֆիկտիւ) համարել այս կռուի այլաբանական պատկերացումը՝ Սաթենիկ թագուհու առ Արգամ ունեցած տարփապին սիրոյ իրր ժողովրդական վէպից առած վիպական (առմանական) մոտիւոփ:

Ընդունենք, որ պ. Սալաթեանի կրա-

կացութիւնը ճիշտ է. որ առաջին դարում
 Բ. յ. Մուրացան նախարարութիւնը գոյու-
 թիւն չունէր: Բայց այդ ի՞նչ կապ ունի մի
 վէպի հետ որի մէջ ոչ թէ Մուրացաններ են
 դուրս գալիս այլ վիշապներ և վիշապազունք:
 Սակայն մի բոպէ ընդունենք, որ ոչ թէ Խո-
 ըննացու մեկնութեամբ այլ նոյն իսկ վիպա-
 սանքի մէջ վիշապազունք են զարմք Աժգա-
 հակայք=Մարք=Մարացուցն տեսարք=Մու-
 րացանք¹: Բայց միթէ Մուրացանների գոյու-
 թիւն չունենալն առաջին դարում Բ. յ. կա-
 րող է ազատցոյ լինել որ Խորենացու ժամա-
 նակի (Ը—Թ դար) ըստ պ. Խալաթեանի երբ
 կային Մուրացանները և շատ լաւ յայտնի
 էին) ժողովրդական վէպի մէջ Մուրացան ա-
 նունը յիշուած չլինի և կապուած մի Ար-
 տաշէս թագաւորի անուն հետ: Մի՞թէ այդ
 անաբրոնիզմը կարելի է իրրե փաստ ծառա-
 յացնել վէպի գոյութիւնը հիբրեյու համար:

«Վէպերից (былины) ոչ մէկի հիմնական
 իմաստի մասին» գեում է Բուսլայեւ պարզ
 դադափար կազմել չէ կարող նա որ ամենայն
 պարզութեամբ չէ իւրացրել այն միտքը թէ
 ժողովրդական վէպը՝ զարերի ընթացքում
 ապրելով սերունդների բերանին, համուծ է
 մեզ լցուած ամենակուպիտ եւ օտարոտի՝ ի-
 ընար հակասող անաբրոնիզմներով: Իւրաքան-
 չիւր սերունդ, որ իւր նախորդներից ստա-
 նում է վիպական աւանդութիւնը, անոր մէջ
 մտնում է իւր ժամանակի ակնարկներ (на-
 мекн), երբեմն և ամբողջ միջադէպեր: Մի
 ուրիշ տեղ նոյն հեղինակը գրում է. «Ժողո-
 վրդական վէպը երբեմն միեւնոյն անձի մէջ
 խառնում է զանազան ժամանակների և զա-
 նազան բնաւորութեան գծեր, և՛ մի աստու-
 ծու, և՛ ա. Գրքի կամ որեւէ սրբի, և՛ որեւէ
 տիաանի, և պատմական անձի, այն էլ որոշ
 տեղական պարագայի մէջ»:

Այսպէս և մեր վիպասանքի մէջ Արտա-
 շէս թագաւորի պատմութեանը կապուած
 են ոչ միայն զանազան ժամանակների և ան-
 ձերի բուն պատմական և կենցաղական գծեր:

1. Մեկ շեռոյ կրտսեմեմի, իսկապես Մարտի ևն
 եղի պատմութիւն, որ Արտաշէսի պատմական երգերին կցուել
 է վիշապների առասպելը:

այլ և բուն առասպելական հատուածներ:
 Մէկ՝ Արտաւազդի կոնիւր Ազատ Մասիսի վի-
 շապների կամ վիշապազանց հետ մէկ էլ վի-
 շապ Արտաւազդի փախուելը Ազատ Մասի-
 սում:

Որոշենք այդ առասպելական մասերը,
 նախ ինչ որ վերաբերում է վիշապներին և վի-
 շապազանց, և ապա Արտաւազդի առասպելը:

(Կր շարունակուի)

Մ. Արեղեան.



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ տարուայ Մարտ ամսին Բերլի-
 նում երաժշտական մի նշանաւոր ընկերու-
 թիւն կազմուեցաւ՝ Միջազգային երաժշտա-
 կան ընկերութիւն, անունով: Տարին չորո-
 րած արդէն նոյն ընկերութեան ճիւղեր են
 բացուել Լայպցիգ, Կոպենհագէն, Փրանկֆուրտ
 Ս. Պետերբուրգ և Վիեննա քաղաքներում:
 Այս ընկերութեան նպատակն է, ինչպէս ա-
 նունն էլ ցոյց է տալիս մշակել ընդհանուր
 ազգերի երաժշտութիւնը: Ընկերութիւնը
 գիտնական մի թերթ է հիմնել—Zeitschrift
 der Internationalen Musikgesellschaft անունով
 որի հետ հրատարակում է նոյնպէս այլ և այլ
 ազգերի պատկանող հեղինակների երաժշ-
 տական յօդուածների մի ժողովածու—Sam-
 melbände der Internationalen Musikgesellschaft
 վերնագրով: Մենք ստացել ենք երկու հրա-
 տարակութիւնների առաջին տեսարակը, եր-
 կուսն էլ մեզ համար հետաքրքրական նորա-
 նով, որ առաջինի մէջ տեղեկութիւն է հա-
 դորդուած մեր սրբերի միաբանակից Տ. Կո-
 միտաս վարդապետի մի դասախօսութեան
 մասին իսկ երկրորդի մէջ տպուած է նոյն
 դասախօսութեան առաջին հատուածը՝ Die
 Armenische Kirchenmusik վերնագրով:

Հ. Կոմիտասը իւր դասախօսութիւնը
 կարդացել է անցեալ մայիսի 10-ին և յու-
 նիսի 14-ին: Zeitsch. d. l. M. թերթից քա-
 ղում ենք այդ դասախօսութեան համառօտ
 բովանդակութիւնը: